

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014 թվականի սեպտեմբերի 20-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2014 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի արդյունքների ամփոփում:
2. 2014 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների սուգարքների և քննությունների արդյունքների ամփոփում:
3. Մասնագիտությունների ուսումնական պլանների հաստատման հարցը:
4. ՀՈՒՖ անապահով ուսանողների սոցիալական վիճակի և ակադեմիական առաջադիմության ներկայացման հարցը:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին- 2014 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի կազմակերպման հարցը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ լուծարային շրջանի ժամանակացույցը նախապես համաձայնեցվել է դասախոսների հետ, կազմվել և փակցվել է հայտարարությունների ցուցափեղկում, տեղադրվել է Գավառի պետական համալսարանի կայքում, քննությունները կազմակերպել է ըստ ժամանակացույցի:

Որոշեցին –Այն ուսանողների համար, ովքեր չեն կարողացել քննությունները հանձնել, լուծարային երկրորդ քննաշրջան կազմակերպել հոկտեմբերի 1-ից հոկտեմբերի 15-ը՝ ներառյալ:

Լսեցին-2014 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների սուգարքների և քննությունների արդյունքների մասին հարցը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ լուծարային շրջանի ժամանակացույցը նախապես տեղադրվել է Գավառի պետական համալսարանի կայքում, ստուգարքները և քննությունները կազմակերպել են ըստ ժամանակացույցի:

Որոշեցին –այն ուսանողների համար, ովքեր չեն կարողացել ստուգարքները և քննությունները հանձնել քննաշրջանի ընթացքում, առաջին լուծարային քննաշրջան կազմակերպել հոկտեմբերի 8-ից հոկտեմբերի 26-ը ներառյալ, երկրորդ լուծարային քննաշրջանը կկազմակերպվի հոկտեմբերի 29-ից նոյեմբերի 9-ը՝ ներառյալ:

Լսեցին- Ուսումնական պլանների հաստատման հարցը / զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/

Քննարկվեցին բարելավված ուսումնական պլանները:

Արտահայտվեցին – ամբիոնների վարիչներ Հ. Ա. Մելիքյանը, Ա. Ա. Սիմոնյանը, Հ. Հարությունյանը, Լ. Քուրքչյանը, Հ. Ղուլոյանը:

Որոշեցին – Մասնագիտությունների ուսումնական պլանները, որոնք քննարկվել են ամբիոններում՝ դասախոսների և արտաքին փորձագետների հետ համատեղ, ներկայացնել հաստատման:

Լսեցին- ՀՈՒՖ անապահով ուսանողների սոցիալական վիճակի և ակադեմիական առաջադիմության ներկայացման հարցը / զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/:

Որոշեցին – Ուսման վարձի գեղջի կիրառման համար ԳՊՀ ռեկտորատին ներկայացնել 22 ուսանողի փաստաթղթեր:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուստուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան